ՆՈՐ-ԴԱՐ

№ 2 ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի 5 Յունուարի 1899 Երեքշաբթի, 5 Յունուարի ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 2

Տարեկան՝ 10 րուբլի, վեց ամիսը 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Թիֆլիսում ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատունը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով, յայտարարութիւնների բառին՝ 2 կ., րեկլամների համար կրկնապատիկ։

ՆՈՐ-ԴԱՐ

(ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Քաղաքական-գրական ամենօրեայ թերթը 1899-ին *հրատարակւում է Թիֆլիսում նոյն ձիւքով և ծրագրով ամեն օր, բացի կիրակի և տօներին հետեւող օրերից։*

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսւանը 6 րուբլի, երեք ամսւանը՝ 3 ր. 50 կ., Թիֆլիսից դուրս՝ ամիսը 1 ր. 50 կ., հատով դուրսը՝ 7 կ., Թիֆլիսում 5 կոպ.։

Բաժանորդ են գրւում Թիֆլիսում՝ միմիայն խմբագրատունը։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ *բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ։*

Խմբագրատունը գտնւում է Բոլշայա Վոդովոզնայա № 20։

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի հասցէն՝ Тифлисъ, въ Редакцію «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis, (Caucase), Rédaction du journal «Nor-Dar»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներկայում։
Քրոնիկոն.— Լուրեր։
Որն է իսկական միջոցը։
Մամուլի շուրջը։
Թղթակցութիւններ.— Բալախանի։ Ղարս։
Քաղաքական.— Մակեդոնիայի խնդիրը։ Անգլիան և դինամիտը։ Ֆրանսիա։
Հեռագրներ.
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 4 յունուարի, 1899 թ.

ԱՆՑԵԱԼԸ ՆԵՐԿԱՅՈՒՄ

—

Տարին անցաւ, բայց բայի Կրետէի ազատութեան և ինքնավարութեան խնդրից, որ աջողութեամբ լուծուեցաւ, միւս մեծ տէրութիւններին և առհասարակ աշխարհը զբաղեցնող խնդիրներն մնացին չլուծուած և զբաղեցնում են մեծ տէրութիւնները, մեծ տէրութիւնների մէջ յարաբերութիւններ կան, որոնք ոչ թէ բարեփոխուել, այլ աւելի ևս ծանրացել են, և եթէ ընդհանուր խաղաղութիւնը պահպանելու համար խաղաղութեան պահապան զօրաւորները չմիջամտեն, ընդհանուր խաղաղութիւնը վտանգուած է։

Այսպէս Ֆրանսիան Ֆաշոդի խնդրում Անգլիային պիջանելով և այդպիսով բարոյական զօրաւոր յարուած կրելով՝ չկարողացաւ Անգլիային չահել. այս վերջինս ահռելի ակորժակը աւելի բացուել է և Ֆրանսիայի վերաբերութեամբ այնպիսի մի դիրք է բռնել, որ նման է առուակի մէջ գայլի գառան վերաբերութեամբ բռնած դիրքին,

Ֆրանսիան, որ ներքին եռապատկութեամբ պուլսր կորցրել է, տատանւելն կրճատում է Անգլիայի դէմ, և այժմ պղում է, որ քսան տարի էլդաս Լոթարինգի վրայ մտածելով չատ բան ձեռքից բաց է թողել։ Մի օր յետ կըգրաւէ էլդաս Լոթարինգը — այդ հարցմունք է, հաստատն այն է, որ այժմ իրեն անզօր է զգում ծովի վրայ և տեսնում է, որ Անգլիան ահագին զօրութեամբ — ծովի վրայ — իւր վզից է բռնել, իսկ Գերմանիայից ինքը չատ հեռացել է։ Խելօք Ֆրանսիացիները այսօր Գերմանիային մօտենալու մասին են մտածում։

Ամերիկան, որ փորր Սպանիայի դէմ «հերոսական» պատերազմ սկսեց, անցեալ տարի Կուբայի «ազատութեան» համար «չանուն բարձր, մարդասիրական գաղափարների», այսօր ստիպուած է Փիլիպպեան կղզինները Սպանիայից զաւթելով, նորից «ազատելու» այդ կղզինները բնիկների ձեռքից։

Փիլիպպեան կղզիների բնակիչները զէնք են վերցրել և ասում են, որ իրենք գրաստ չեն և չեն կամենում փոխել սպանական ճնշանը, ամերիկեան ծամբի վրայ նրանք ուզում են ազատ, իրենք իրենց երկիրը կառավարել։ Եթէ ամերիկացիները յետ չկանգնեն իրենց «մարդասիրական եռանդից» այս տարի Փիլիպպեան կղզիներում արիւնը առատորէն պիտի հոսի, և մենք նոր տեսակի տեսարանի ականատես պիտի լինինք. ազատուողները և ազատողները կըռւում են միմեանց հետ և իրար կոտորում...

Իտալիան էլ անցեալ տարի ներքին նեղութիւններից անյանելով՝ այժմ ստիպուած է նորից Աֆրիկա զօրք ուղարկելու պատրաստութիւն տեսնել, որովհետև Հարիշատները իր Մենելիք ծպատուր կայսրով ինչ որ անհանգստացել են... Աֆրիկա ար չաւելու հարկաւորուած է այն Իտալիան, որ Սրիսպիի պէս պօրատոր պետական մարդուն պրծից Աֆրիկայի պատճառով։

Աւստրիա Ունգարիան ներքին քաղաքական ապագնական խռովութիւններով իւր հիմքերից շարժուելով։ այս տարի էլ նոյն և աւելի ծանր վիճակի մէջն է։ Աստուած միայն գիտէ՝ թէ ինչ ընթացք կըստանայ այդ պետութեան մէջ շարունակուող ապագնական և պարլամենտական վիճակը։

Գրաֆ Բօյստի կայացրած համաձայնութիւնը հնացած է, իսկ այժմ չկայ մի նշանաւոր պետական մարդ, որ կարողանար նոր համաձայնութիւն գլուխ բերելով Աւստրիա-Ունգարական պետական նաւը ապահով նաւահանգիստ հասցնել։

Յամենայն դէպս, եթէ ներկայ դրութիւնը չարունակուի, կարող է այնպիսի դրութիւն առաջ գալ, որ եւրոպական միւս մեծ պետութիւնները ստիպուած լինին միջամտելու։

Անցեալ տարի մեծ տերութիւնների, աջողակ էին և աջողութեամբ էլ հին տարուց անցան նոր տարին՝ Աւստրիան, Գերմանիան և Անգլիան։

Անգլիան այսպէս թէ այնպէս ցոյց տուից իւր զօրութիւնը խաղաղութիւնը պահպանելով և միևնոյն ժամանակ իւր շահերը ոչ խարհիս ամեն կողմերում առաջ տանելու համար պատերազմի պատրաստութիւնը տեսնելով։

Ազդութիւնից դուրս բարձրացրած Անգլիան հէնց նոր տարուայ առաջին օրերից համարձակ և անվախ դիմից իւր նպատակին։

Գերմանիան խաղաղութիւնը պահպանելով, իւր աջող քաղաքականութեամբ թոյլերի և օրաւորների վերաբերութեամբ կարողացաւ անցեալ տարուայ ընթացքում նորից ձեռք բերել այն տիրապետող դրութիւնը, որ Բիսմարկի պաշտօնից հեռանալուց յետոյ՝ կորցրել էր։

Ռուսիան իւր խաղադասէր քաղաքականութեամբ օրաւոր պահպան հանդիսացաւ եւրոպական խաղաղութեանը և եւրոպական պինուորական ոյժերի հաւասարակշռութիւնը պահպանելով՝ իւր քաղաքական ձեռնարկութիւնների մէջ աջողութիւն ունենալով անցեալ տարի, առաջարկեց եւրոպային չափաւորել երկրի պինուորական ոյժերը, որով ապգերը պիտի ազատուեն իրենց վրայ ծանրացող պինուորական չափազանց չատ տուրքերից և մարդկութիւնը պիտի կարելոյն չափ ապահովուի պատերազմների ծանր հետեւանքներից։

Ռուսիայի կողմից եղած այս մեծահոգի առաջարկութիւնը ամեն տեղ սիրով ընդունուեց և ամեն երկրի ընտիր մարդիկ և մանաւանդ խաղաղութեան բարեկամները առանձին երախտագիտութեամբ և հիացմունքով ընդունեցին ռուսական այդ մարդասէր առաջարկը։

Այս տարի կըկայանայ այդ մասին կոնֆերենսիան և հաւանական է, որ մեծ տէրութիւններն, ռուսաց կառավարութեան ձեռներէցութեամբ, կաշխատեն լուծել կոնֆերենցիայում առաջարկուելիք խնդիրները, խնդիրներ, որոնց աջող լուծումից է կախուած և ապագայում մեծ պետութիւնների փոխադարձ յարաբերութիւնները։

ՔՐՈՆԻԿՈՆ

Վեհափառ Կաթողիկոսը ահա քանի օր է իրեն ակար է զգում։ Այդ պատճառով Նորին Վեհափառութիւնը չկարողացաւ այցելութեան գնալ իշխան Կառափարշապեին։ Վեհափառ դանգատւում է, որ Թիֆլիսում աւելի տաք հագնելով, աւելի է մրսում քան Էջմիածնում։ Այս հանգամանքը վերագրւում է Թիֆլիսի փոփոխական եղանակին։ Ցոյս կայ, որ Վեհափառը Ջօրօհնէքի տօնին անձամբ պիտի կարողանայ ներկայ լինել եկեղեցական արարողութեանը։

—

Թիֆլիսի քաղաքագլուխ պ. Ֆ. Եւան գալեանի կարգադրութեամբ, վաղը, յունուարի 6-ին, Ջօրօհնեայ հանդիսի ժամանակ կարգը պահպանելու համար նշանակուած է մօտ երեք հարիւր հոգի արհեստաւորների դասակարգից։ Սրանից մի հարիւր հոգի, գլխաւորապէս օրթոդոքս դաւանութեան պատկանողներից, ներկայ կըլինեն ռուսաց հոգևոր հանդիսին և կըգտնուին ոստիկանապետի տրամադրութեան տակ, իսկ մնացածները ներկայ կըլինեն հայոց հանդիսին և կըգտնուին ոստիկանապետի օգնականի իշխանութեան տակ։ Կարգապահ արհեստաւորները կրծքի վրայ կունենան եւագոյն ժապաւէնի նշան։

—

Թիֆլիսի քաղաքային գործերի քննութեան արդիւնքը ներկայացուած է Կովկասի իշխան կառավարչապետին։

—

Մայրաքաղաքի թերթերի ասելով, քրէական նոր օրէնսդրութիւնը քննող յանձնաժողովը պատիժների հետեւեալ կարգերն է սահմանել. ժամանակ պատիժ կախաղանի միջոցով, ոչ հրապարակական. ժամանակը աշխատանքներ անորոշ ժամանակով կամ 5 ից մինչև 15 տարի ժամանակով. աքսոր անորոշ ժամանակով. բանտարկութիւն ուղղիչ տան մէջ $1^1/_2$ տարուց մինչև վեց տարի. բերդարկութիւն բերդերի կամ առանձին շէնքերի մէջ երկու շաբաթից մինչև վեց տարի. բանտ երկու շաբաթից մինչև մի տարի։ Կալանաւորները իրարից բաժանւում են միայն գիշերները։ Ընդհանուր հետեւում են՝ կալանաւորումն մի օրից մինչև վեց ամիս և տուգանք։ Մահուան պատժի չեն ենթարկւում անչափահասները մինչև 21 տարեկան հասակը, հօթանասունամեայ ծերերն ու պառաւները, բացի պետական կարեւոր յանցանք գործած դէպքերից։

—

Դանձակի նահանգական վարչութիւնը Գովկասի բժշկական մասի վարչութեանը, «Նով. Օբ.»-ի ասելով, խնդրամատոյց է եղել Ջուշում հիւանդանոց հիմնելու։

—

Թիֆլիսի նահանգապետը Վ. Ն. Հերքեզովին հաստատել է քաղաքային վարչութեան անդամ, որպէսի պաշտօնի համար նրան ընտրել էր քաղաքային խորհուրդն դեկտեմբերի 7-ին։ Յունուարի 2 ին պ Հերքեզովը հարկաւոր երդումը տուեց։ Քաղաքային վարչութեան միւս նորընտիր անդամ պ. Չեստակովը դեռ չի հաստատուած։

—

Թիֆլիսի «Ռուս. գործ.»-ը հետագրում է մայրաքաղաքի թերթերին, թէ սպատւում է այն կարգադրութիւնների վերաքննութիւնը, որոնցով վերացւում էին Անդրկովկասի երկաթուղու բանուորներին արուած արտօնութիւնները և որոնք առիթ եղան դժգոհութիւնների։

—

Երեւանի նահանգապետ գրաֆ Տիգենհաուզէնը ստացել է ս. Աննայի առաջին աստիճանի շքանշանը։

—

Թիֆլիս-Կարսի երկաթուղին հանդիսաւոր կերպով կըբացուի այս տարուայ օգոստոսի 30-ին։ Իսկ մինչև այդ, մատրութիւն կայ ժամանակաւոր հաղորդակցութիւն բանալու Թիֆլիսից մինչև Ղարաքլիսա (140 վերստ)։ Մինչև այժմ երկաթգծերը են ձգուած Թիֆլիսից 182 վերստ տարածութեան վրայ. մնում է ձգելու 22 վերստ մինչև Ալէքսանդրապոլ և 96 վերստ մինչև Կարս։ Ամբողջ գիծը կունենայ 18 կայարան և 11 կիսակայարան։ Մեծ կամուրջների թիւն է 17, ներքնուղիների թիւը — 13, որոնցից ամենաերկարը (800 սաժէն) Ջաջուռի ներքնուղին, որը ներկայումս բոլորովին պատրաստ է և նստել է 1.576,599 ր.։ Ամբողջ երկաթուղու շինութիւնը, առանց չարժական մասի նստելու է 20.100,000 րուբլի։

—

Այս օրերս Ռոստովում-Դոնի վրայ գիւղատնտեսական և առևտրական-արդիւնաբերական բանկ պիտի բացուէր, որի նպատակն է ոչխարաբոյծների էժան տոկոսով փոխառութիւն տալ և ազատել նրանց խոշոր բրդավաճառներից կախում ունենալուց, Բանկի բոլոր ակցիաները ներկայումս ցրուած են և գտնւում են ոչխարաբոյծների ձեռքին։

Այդպիսի մի բանկի կարեւորութիւնը զգացւում է նաև Թիֆլիսում, ուր ներկայումս խոշոր բրդավաճառները կատարելապէս կեղեքում են ինչպէս ոչխարաբոյծներին, այնպէս և մանր բրդավաճառներին, որոնց միջոցով նրանք սովորաբար հաւաքում են բուրդը։

—

Ս. Էջմիածնի սինոդի պրոկուրոր Կանչինին ստացել է Ս. Վլադիմիրի 4 րդ աստիճանի շքանշանը։

—

Թիֆլիսի հաշտարար դատարանի 1-ին բաժնի հաշտարար դատաւոր Լ. Ե. Մրիրովը Թիֆլիս քաղաքի նոտար է նշանակուած 1899 թ. յունուար 1-ից։

Ինչպես տեսնում ենք, այդ ամենը ոչ մի կերպ չի համապատասխանում ռուսական ամենաառաջադեմ գրականության ոգուն։ Ինչպես ասում է Ն. Ռուբինշտեյնը, «Ռուսական գրականությունը միշտ եղել է ազատության, ճշմարտության և առաջադիմության գրականություն»։ Ռուսական գրականության այդ ոգին է, որ ներշնչել է նրա ամենամեծ ներկայացուցիչներին՝ Պուշկինին, Գոգոլին, Լերմոնտովին, Տուրգենևին, Գոնչարովին, Ռադիշչևին, Դոբրոլյուբովին, Չեռնիշևսկուն, Պիսարևին, Սալտիկով-Շչեդրինին, Գարշինին, Կորոլենկոյին, Գորկուն և շատ ուրիշներին

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա. ՏԵՐ-ՄԱՏԵՈՍԵԱՆ

Ժամանակ, որ մեկն ու մյուսը ուզում են իմանալ... Ամենատարած մոլորությունն այն է, թե ազգերի կյանքում ամեն ինչ կանոնավոր ընթացքով է գնում, ամեն ինչ ենթարկվում է որոշ օրենքների, ամեն ինչ ունի իր պատճառն ու հետևանքը, ամեն ինչ կանխատեսելի է, ամեն ինչ կարելի է հաշվել, ինչպես հաշվում են մաթեմատիկական խնդրի պատասխանը։ Ոչ, ոչ և ոչ։ Ազգերի կյանքում ամեն ինչ կարող է պատահել, ամեն ինչ կարող է տեղի ունենալ, ամեն ինչ կարող է հանկարծակի գալ։ Ազգերի կյանքում ամեն ինչ կարող է ենթարկվել ամենաանհավանական զարգացումների

հանգները կատարեալ իրաւունք ունին Փիլիպպեան կղզիներն իրենց վերապահելու առ միշտ, բայց ոչ Մակ-Գինլէյը. ոչ մինիստրութեան սրեւէ անդամ չենք ձգտում այդ բանին։

Ըն հարցին, թէ ինչու կարելի չէ Փիլիպպեան կղզիների հետ վարուիլ այնպէս, ինչպէս Կուբայի հետ, Ֆորակերը պատասխանեց, որ Կուբայի խնդրում գործը վերաբերում էր միայն այն բանին թէ միացեալ Նահանգները ինչպէս պէտք է վերաբերուի դէպի Սպանիան. իսկ Փիլիպպեան կղզիների հետ կապուած են ուրիշ բարդ խնդիրներ, որոնց մասին բացատրութիւն կարող է տրուել միայն սենատի գաղտնի նիստի մէջ։

ԿԱԼԿԱԹԱ. — Ժանտախտի մի քանի դէպքեր եղան։

ՊԱՐԻԶ.— Պատգամաւորների ժողովում շարունակուում է Քորեոպերի յարուցած մէջ նադէպի խնդիրների քննութիւնը։ Մեծ յուզում։ Ազգայնական Մլլուան պատասխան քննութիւն է պահանջում։

ԲԵՐԼԻՆ. — Ռայխստագ։ Զինուորական մինիսար Հոսլոբը բացատրեց զինուորական օրինագծի հիմունքները։ Այժմ այս մասդրութիւն չկայ զօրարանակը մեծացնելու թուիչներով, այլ մտադրութիւն կայ պատերազմական ոյժը զարգացնելու ատիճանաբար։ Նախկին սիստեմը փոխելու հիմքերից առաջինը պէտք է համարել Ձարի հրովարտակը, որը վրատահեցնում է, որ այդ կողմից երկար տարիներ Գերմանիային յարձակման վրտանգ չի սպառնում։ Զինուորական մինիստրն ասաց, թէ պէտք է վերացնել ոչ թէ այժմեան զինումները, այլ այժմեան չդայնութիւնը։ Ընտրեհան ռուսաց չրջարերականի տեսիլ մինիստրը նկատեց. «Համաշիարհային պատմութիւնն ուսուցանում է, որ մինչև անգամ ամենազօրեղ պետերի կամքը չի կարող փոխել մեծ ազգերի կենսական պայմաններն ու էութեան կարիքները։ Եթէ ժողովուրդը կամենում է տնկամ լինել, նա պէտք է ոյժ ունենայ իր չահերը պաշտպանելու ամեն տեսակ յարձակման դէմ։ Եթէ ժողովուրդն իր զօրքի իր մեծութեանն ու զօրութեանը վայել բարձրութեան վրայ չի պահում, ապա նա հրաժարուում է այդ ոյժից և իջնում է այն բարձրութիւնից, որի վրայ կանգնելու կոչուած էր նա»։

ՄԱՍՍՈՎԱ.—Այն ճակատամարտից չեասյ, որի մասին հաղորդուեց. Մակոնենն ու Մանգաշան հաշտութիւն կայացրին։ Վերջինս վերսին հաւատարմութեան երդում տուեց, ասաց, թէ իր հաւատարիմ հպատակութեան զգացումները կարտայայտէ Ազիս-Աբերում, տուրք կըտայ և փախած պարպրտիչներին իսյ կրտայ վերադառնալու Տիգրէ։ Հաստատում է այն լուրը, թէ Մենելիքը վերադարձել է Ձօու խիստ աչողութեամբ։

ՊԱՐԻԶ. Հակահրէական Լաղին յարձակումների է ենթարկում վճռաջինջ ատեանին և ասում է, թէ Դրայֆուսի օգտին եղած ապիատացիային օգնում են օտարերկրեայ դրամները։ (Բողոքներ, աղմուկ)։ Լեբրէն ասում է, թէ քննութիւնն ապացուցել է, որ Պիկարին ցոյց տուած յարգանքի այն նչանները, որոնց համար պախարակում են վճռաջինջ ատեանի խորհրդատուներին, ցոյց էին արուած բոլոր վկաներին։ Մազոն սկսել է քննութիւն կատարել Բարեպերի վերջին յայտարարութիւնների մասին։ (Ծափեր)։

Կ. ՊՈԼԻՍ.—Բայի քիչ ժամս արձակող վաւօդի 30 հազար շրապնէշներ դնելու մասին հրատարակուած լուրից. հրատարակուեց մի ուրիշ լուրէ ևս, որով հրամայուում է ձեռք բերել 7½ անս. փող ունեցող 162 արագաձիգ թնդանօթ, կոմմակիրպելու 27 ռմբաձիգ-զօրագունդ, որոնք նչանակում են մասամբ վերադինելու առաջին երեք զրաքանակները։ Բայի դրանից, վճռուած է ձեռք բերել ատմբեր, վաւօդ և մի քանի հազար հրացան։

ԿԱՆԷԱ.—Ըրքայազն Գէորգը մի կոչ ուղղեց Կանդիայում եղած փախստականներին, որոնց առաջարկում է կամ վերադառնան իրենց հողերը կղզու ներքին մասերում, կամ հեռանան կղզուց։ Ցանձնաժողով է նչանակուած դատարան կազմելու խնդիրների վերաբերմամբ։

ՊԱՐԻԶ.—Կաւենակի ճառից յետոյ, որը պնդում էր, թէ ներկայ դրութեան համար պատասխանատուութիւնն ընկնում է հասարակապետութեան վրայ, Դիւպուին իոսեց իր դէպի զօրքն ունեցած հոգատարութեան և դէպի օրէնքը տածած յարգանքի մասին։ «Երրորդ քննութիւն է նչանակուած։ Ժամանակ է վերջ տալու Դրայֆուսի գործին և երկրին անդորրութիւն տալուս։ (Ծափեր)։

ՄԱՍՍՈՎԱ. Մանգաշայի և Մակոնենի միջև կայացած հաշտութիւնն արդէն խանգարուած է, որովհետև Մակոնենը պահանջել էր, որ Մանգաշան և իր կողմնակից Սիբաթին իր հետ միասին գնան մինչև Ամբալաջի, մինչդեռ նրանք համաձայնել էին ուղարկել իրենց տեղապահներին։ Կարծում են, որ նոր ճակատամարտ կըլինի։

ՊԱՐԻԶ, 2 յունուարի.—Պատգամաւորների ժողովը, 429 ձայների մեծամասնութեամբ ընդդէմ 125-ի ընդունեց հերթական գործերին անցնելու կառավարութեան ընդունած հասարակ բանաձևը։

ՆԻՒ ՅՕՐՔ.—Փիլիպպինացիները պաշարում են Իլո Իլոն գետի բերանի կողմից։ Ամերիկական մի զօրախումբ փորձեց ափ հնչելու, բայց ստիպուած էր նահանջ տալու։

ՄԱՍՍՈՎԱ.—Դեկտ. 30-ին Մակոնենը փորձեց յարձակում գործել Մանգաչայի վրայ, բայց յետ մղուեց։ Մակոնենը մեծ կորուստներ ունեցաւ։ Մանգաշան օգնական զօրքեր ստացաւ, բայց ոչ այնքան, որ վստահանալ կարող մտնելու բերդից դուրս։

ՊԱՐԻԶ.—Մինիստրների խորհրդի մէջ Քէյսլինէն հաղորդեց, որ կոսի քննութիւն կատարել, բացայայտելու համար, թէ ինչպէս է եղել, որ Պիկարի վերաբերմամբ վճռաջինջ ատեանի անեծմնեբի ցոյց տուած վարմունքի մասին էրնի կազմած զեկուցումն ընկել է կողմնակի անձերի ձեռքը։

ՄԱԴՐԻԴ. — Մանիլեայից հաղորդում են, թէ Իլո-Իլո ուղարկուելիք ամերիկական զօրքերը խռովութիւն են յարուցել և հրաժարուել են գնալ այտեղ։ Գեներալ Միլլերին հրամայուած է հեռանալ Իլո-Իլոյից և վերադառնալ Մանիլեա։ Ամերիկական բոլոր զօրքերը հրաման են ստացել կեդրոնանալու Մանիլեայում։ Դրութիւնը խիստ ծանր է։

ՊԱՐԻԶ.—«Հաւատի գործ.»-ը, հրաժարուելով պատասխանատուութիւնից, հաղորդում է. «քաղաքական չրջաններում ասում են, որ Կամբոնն ու Սոլսբըրին չորեքչաբթի օրը առաջին պաշտօնական խորհրդակցութիւնը կունենան Փրանսիայի և Անգլիայի միջև եղած վիճելի խնդիրների մասին։ Կարծում են, որ այս դրուցագրութիւնը կընպաստէ խաղաղմանը»։

ԼՈՆԴՈՆ, 2 յունուարի. — Հինգչաբթի օրը Անգլիայի չատ տեղերում ամենաստիկ փոթորիկ բարձրացաւ։ Լոնդոնում խիստ փոթորիկ կար և կարկուտ տեղաց։ Գրեթէ ամեն հաղորդակցութիւն կտրուեց։ Երկրի խորքերից տեղեկութիւնները դալիս են գլխաւորապէս երկաթուղիների գծերից։ Հաղորդում են, որ բաւականաչափ մարդիկ են զոհուել և անզգին վնասներ են եղել։ Մինչև ուրբաթ երեկոյ մայր ցամաքից տեղեկութիւն չկար։ Ամբողջ ծովափին դժբաղ տութիւններ են պատահել նաւերին, որոնց ժամանակ մարդիկ են կործանուել։ Լևնֆիրֆիսենի մօտ (Ուէլսի իշխանութիւն) երկաթուղու կառախումբը գլորուել է ծովը, որովհետև, երկաթգծերը ջրասոյլ էին եղել. մեքենավարը և հրնոցպանը ջրահեղձ են եղել։ Մանչեստրում հինգ հոգի սպանուած են քանդուած ծխնելոյզի տակ մնալուց։

ԱՍԻԱԲԱԴ.—«Զակասպ. Օբոզր.» հաղորդում է, որ երկրի կառավարչի կարգադրութեամբ մայիսի 1-ից դադարեցնուում է պարսկական և տեղական դատարանների չրջանառութիւնը դրամական հրապարակում. դադարեցնուում է նաև դատարանների ընդունելութիւնը իբրև արքունական տուրքերի վճարում։

ԼՈՆԴՈՆ. — Ծովային վարչութիւնը, ինչպէս լսում է, պատուէր է տուել չինելու առաջին կարգի չորս յածանաւ, փոխանակ երկուսի, ինչպէս մտադրութիւն կար սկզբում, չորս մարդանաւ։

ՊԱՐԻԶ.—Էստերհազին դիմել է վճռաջինջ ատեանի նախագահին մի նամակով, որի մէջ պնդում է, թէ 1894 թուին ինքը, խուզարկու բիւրոյի այն ժամանակուայ կառավարիչ Զանդհերի հրամանով, համաձայնութիւն էր կայացրել օտարերկրեայ մի գործակալի հետ և գտել էր զինուորական մինիստրութիւնից թղթեր գողացողին։ Էստերհազին յայտարարում է, թէ ինքը միշտ համաձայնութեամբ է գործել իր իշխանաւորների հետ, որոնք իրեն մնակ թողեցին միայն 1898 թ. յուլիսի 1-ին, և ապա ասում է, որ Պիկարն իր դէմ դատադրութիւն էր սարքել. ընդ սմին Էստերհազին պնդում է, թէ իր ասածների մասին ապացոյցներ ունի, և յոյս է յայտնում, որ ինքը ստիպուած չի լինել վճռաջինջ ատեանի որոշումները հասարակաց կարծիքի դատաստանին ենթարկելու։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Առաջին փոխադրութեան տիրաժը. երկու հարիւր տղայ լուրլի—4760/19, հօթանասուն ու հինգ տղայ ր.- 5885/24, քառասուն տղայ ր. 16420/20, քառասուն և հինգ տղայ ր.—2056/42, սասն տղայ ր.—6925/43, 13723/4, 11781/22։ ութ տղայ ր.—9222/42, 8236/17, 1534/40, 4918/16, 18505/39. հինգ տղայ լուրլի—7578/4, 18003/47, 3397/43, 494/46, 5455/32, 6586/22, 10368/19, 17325/38, տղայ լուրլի—750/3, 11199/34, 4791/48, 13917/38, 562/11, 12778/27, 3193/7, 1547/48, 3839/12, 13364/45, 4674/6, 16440/24, 2285/16, 1667/28, 17396/34, 8519/19, 3880/50, 2981/18, 5216/13, 8675/46։

—

ԱՆԴՐՈՎԿՈՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարզտատր գնացքը № 1 Բազուից Թիֆլիս մեկնում է օրուայ 4 ժ. 15 ր., հասնում է Թիֆլիս առ. 8 ժ 38 ր. մեկնում է Թիֆլիսից Բաթում առ. 9 ժ. 20 ր., հասնում է Բաթում եր. 8 ժամին 52 ր.

Փոստային գնացքը № 3 Բազուից Թիֆլիս մեկնում է գիշ. 10 ժ. 50 ր., հասնում է Թիֆլիս եր. 5 ժ. 9 ր., մեկնում է Թիֆլիսից Բաթում եր. 6 ժ. 10 ր., հասնում է Բաթում առ. 7 ժամին։

Մարդատար գնացքը № 2 մեկնում է Բաթումից Թիֆլիս առ. 8. ժ. 30 ր, հասնում է Թիֆլիս եր. 8 ժ. 30 ր., մեկնում է Թիֆլիսից Բազու եր. 9 ժ. 15 ր., հասնում է Բազու օրուայ 1 ժամին։

Փոստային գնացքը № 4 մեկնում է Բաթումից Թիֆլիս եր. 8 ժ. 40 ր.. հասնում է Թիֆլիս առ. 9 ժ. 55 ր.. մեկնում է Թիֆլիսից Բազու առ. 11 ժ. 20 ր., հասնում է Բազու առ. 5 ժ 42 րոպէին։

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԱՆՆԴԱԲԵՐԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ

(Սոլոլակ, Սադովայա փողոց, № 64)

(սեպհական տուն)

Հեռաթոռ № 230

Երթեւեկ հիւանդների ընդունելութիւնն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ժամը 2—4-ը յետ ընկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ, մասնաւոր ընդունելութիւնով առանձին օր՝ ժամը 8—10 առաւօտեան—վճարը 2 ր.։ Գիշերօթիկ հիւանդներ և ծննդարեր կանայք ընդունուում են գիշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի տրուի. վճարը որոշուում է ըստ դասակարգերի։ Հուսնորները ձրի են։ Դիսենտոլպիայի բաժանմունք ընդունողները վճարում են 1 ր 50 կ. մինչև 8 ր. մի օրուգիշերուայ համար. ծննդարերական բաժանմունքը մանողները—1 ր. մինչև 5 ր. մի օրուգիշերուայ համար։ Երկունքի ազատելը 10 ր. մինչև 50 ր.։ Անդամահատութիւնը ըստ համաձայնութեան։ Երթևեկ բոլոր հիւանդները դեղերը և նիւթեր ստանում են ընդունելութեան ժամանակ ձրի։ Հուսնորների համար 1-ական մահճակալ է դրուած իւրաքանչիւր բաժանմունքում, ուր տեղաւորուում են նրանք տեսչի և նրա պ. պ. բ/կների առարկութեամբ ձրի։

Հիւանդանոցի տէր և տեսուչ
Մ. ՄԿՐՏՉԵԱՆ.

—

ԹԱՂՄԱՎԻՐԱԿԱՆ ՁԱՆԱՊԱՐՀ

Թիֆլիսից I-ին հինգ տեղ ունեցող կառքը մեկնում է առ.9 ժ.30 ր. գիշերում է Մլէխում և հասնում է Վլադիկաւկազ միւս օրը եր. 7 ժ. 20 ր.։ II-ը մեկնում է առաւօտեան 11 ժամին և գիշերում է Պասանաուրում. հասնում է Վլադիկաւկազ միւս օրը եր. 9 ժ. 20 ր.։

Վեց տեղ ունեցող I-ին հանրակառք (առանց գիշերելու) մեկնում է օրուայ 2 ժ. 30 ր. և հասնում է Վլադիկաւկազ միւս օրը եր. 4 ժ. 35 ր. II-ը մեկնում է եր. 3 ժ., առանց գիշերելու, հասնում է Վլադիկաւկազ միւս օր եր 11 ժ. 20 ր.։

Վլադիկաւկազից հինգ տեղ ունեցող I կառքը մեկնում է առ. 7 ժ. գիշերում է Մլէխում և հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 6 ժ. 30 ր.։ II-ը մեկնում է առ. 9. 30 ր. գիշերում է Պասանաուրում և հասնում է Թիֆլիս միւս օրը 7 ժ. 55 ր.։

Վեց տեղ ունեցող I-ին հանրակառք (առանց գիշերելու) մեկնում է եր. 5 ժ 30 ր. և հասնում է Թիֆլիս միւս օր եր.7 ժ. 25 ր.։ II-ը մեկնում է եր. 9 ժ. և առանց գիշերելու հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 10 ժ. 55 ր.։

—

ԴՈԿ. Գ. Ս. ՀԵՐՑՖԵԼԴ

որ իւր մասնագիտութիւնը պարապել է Վիննայում, ընդունում է կաշուի, վեներական, միզակալ և սիֆիլիտիկական հիւանդութիւններ ունեցողներին՝ ամեն օր առաւօտեան 9—11 ժամը և երեկոյեան 5—8 ժ.։ *Մաղերեան փողոց, № 5, Լիսիցեի տուն։*

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(М) № 167911 (9—1)

(М) № 52003 9—3

ԿԱՐՈՒԶԵԻԻ ՎԱՐԺՈՒՀԻ

Աւարտել եմ տիկ. Գեմենդիեւայի կարուձևի դպրոցը **ԱՏԵՍՏԱՏՈՎ** և ցանկանում եմ ունենալ աշակերտուհիներ։ Ուսուցման չրջանն արժէ միայն **15** ՐՈՒԲԼԻ։ Հասցէն՝ Զուղուլբէթ, Վոլոդարդեօմսկայա փողոց, տուն Սարիբէկովի, № 15։ 20—5

ՄԵԾԱՔԱՆԱԿ ԱՀԱԳԻՆ ՊԱՀԵՍՏ

զանազան գալանտերէյ և նոր տարազի ապրանքների, սկսած գլխարկներից մինչև քազաքային ամենանուրբ ճաշակի տեսակները։ Կանանց հագուստի վերարկուներ մետաքսեայ և այլ տեսակ զարդարանքներ, բախտօմա և կոմ կարասիքի պիտոյքներ, մանուֆակտուրային ապրանքներ և արուեստական ծաղիկների առանձին պահեստ։ Զանազան ասեղներ իր յատուկ գործարանից: **ԵՕՍԻՓ ՍԻՄՕՆՕՎԻՉ ԳԻՒՇՄԱՆԻ**, *որը գործ է անում «Ս. Գիւշման և Որդի» ֆիրմայով։*
Մոսկուա։

Հասցէն՝ Москва, Черкасскій переулокъ домъ Ходжиконста.
Въ Нижегородской ярмаркѣ: близъ китайскихъ рядовъ, рядомъ съ Невской Ниточной и Шлиссельбургской мануфактурами
Въ Ирбитской ярмаркѣ: Торговая площадь, близъ Пассажа домъ Ларькова.
(1146) 4—4

Լոյս տեսաւ ՄԵՐ ԿԱԶՄԱՆ

1899 ԹՈՒԻ, ՍԵՂԱՆԻ, ՊԱՏԻ

Թ. և ԱՐՄԱՆՍԿԻՅ КАЛЕНДАРЬ

(на русскомъ языкѣ съ предсказаніями) ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ։ *Հարուստ յատկութեամբ և երազահանով։ Վաճառւում է բոլոր գրատուն անոյնների մէջ։*

10—2 (1001) *Թիֆլիս՝ Մակար Զաքհեան։*

Ռեդ. цензуроЮ. Тифлисъ. іюня 4 дня, 1899 г. Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Гоголев. пр спектъ, домъ № 12. — Телефонъ № 387